ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

6 փետրվարի ուրբաթ 2026
տպագրության ԺԵ տարի

8
(3217)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԶԱՎԵՇՏԱԼԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՇԱՐՔԻՑ

ՀՀ պետական գնումներում զավեշտալի իրերի շատ կարող եք հանդիպել, օրինակ՝ տիկնիկ, չիր, կոնյակ, շարֆ, միլիոնավոր գրիչներ, որոնց արժեքը շուկայականից հաճախ խիստ տարբեր է:

Նման մի հետաքրքիր գնում ArmLur.am-ը նկատել է ՀՀ վարչապետի աշխատակազմի գնումներում: Օրերս վարչապետի աշխատակազմը 6 մլն 140 հազար դրամ արժեքով պայմանագիր է կնքել Վահան Ազիբեկյան Հակոբի ԱՁ-ի հետ եւ ձեռք բերել «տեսաֆիլմերի արտադրության ծառայություններ»: Համաձայն պայմանագրի տեխնիկական բնութագրի՝ կինո եւ տեսաֆիլմերի արտադրության ծառայությունները իրենցից ենթադրում են ռիլային (reels) տեսանյութերի պատրաստում, իսկ կատարողը պարտավոր է տրամադրել պատվիրատուին 60 ռիլ տեսանյութ:

«Ռիլային տեսանյութերի տեւողությունը՝ յուրաքանչյուրն առնվազն 1 րոպե 30 վայրկյան, առավելագույնը՝ 2 րոպե 30 վայրկյան, չափը՝ 1080ճ1920 px՝ ինստագրամյան հարթակի բոլոր պահանջներին համապատասխան:

Տեսանյութերը պետք է նկարահանվեն հատուկ տեսախցիկի, iOS կամ Android վերջին սերնդի թողարկումներով:

Տեսանյութերը կարող են պարունակել բացօթյա եւ փակօթյա նկարահանումներ Երեւանում եւ Հայաստանի մարզերում, դրանից կադրեր, տեքստեր, ֆիլտրեր, AI լուծումներ, տարբեր էֆեկտներ, ստեղծագործական լուծումներ, մոնտաժ, հեղինակային իրավունքի պահպանմամբ երաժշտություն»,- ասվում է պայմանագրի տեխնիկական բնութագրում:

⇨ էջ 5

Օրեր առաջ համացանցում տեսանյութ էր տարածվել, որում երեւում էր, թե ինչպես են ոստիկանության Երեւան քաղաքի վարչությունում քաղաքացուն ծեծով, հայհոյանքներով խոշտանգում՝ ցուցմունք կորզելու համար: ՆԳՆ-ից արձագանքել են տեսանյութին՝ նշելով, թե տեսանյութում երեւացող ծառայողի լիազորությունները կասեցվել են: «Ոստիկանի մասնակցությամբ համացանցում տարածված տեսանյութի առնչությամբ հայտնում եմ, որ ՆԳՆ ներքին անվտանգության եւ հակակոռուպցիոն վարչությունում կա նշանակված ծառայողական քննություն, տեսանյութում երեւացող ծառայողի լիազորությունները կասեցվել են: Առերեւույթ հանցագործության վերաբերյալ տրվել է հաղորդում»,- նշել էր ՆԳՆ խոսնակ Նարեկ Սարգսյանը: ArmLur.am-ը տեղեկացավ, որ նախաձեռնվել է քրեական վարույթ: Դատախազի կողմից հանրային քրեական հետապնդում է հարուցվել Հայկ Հակոբյանի նկատմամբ քրեական օրենսգրքի 450-րդ հոդվածի 1-ին մասով:

ՀՀ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում քննված քրեական վարույթով իրականացված նախաքննությամբ հիմնավորվել է, որ ՀՀ էկոնոմիկայի նախարարության համապատասխան վարչության պաշտոնատար անձը, իր ծառայողական լիազորություններն ու դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով տնտեսվարողի օգտին ապօրինի գործողություն կատարելու համար, նրանից կաշառք է ստացել: Մասնավորապես՝ նախաքննությամբ պարզվել է, որ Հնդկաստանից Հայաստանի Հանրապետություն բնական մշակված ադամանդների ներմուծման համար պետական վերահսկողական ակտ կազմելու գործընթացում խոչընդոտներ չստեղծելու եւ նշված ապրանքատեսակի ներմուծման ընթացքն արագացնելու համար վերը նշված պաշտոնատար անձը 2025 թվականի մայիսի 13-ին «Զվարթնոց» օդանավակայանում կաշառք է ստացել տնտեսվարողից: Էկոնոմիկայի նախարարության պաշտոնային մեղադրանք է ներկայացվել ՀՀ քրեական օրենսգրքի 435-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, իսկ կաշառք տված անձին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 436-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով: Քրեական վարույթով նախաքննությունն ավարտվել է, եւ վարույթի նյութերը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել են հսկող դատախազին՝ այն հաստատելու եւ դատարան ուղարկելու միջնորդությամբ:

ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Երեկ Հ1-ով հարցազրույց ունեցա, որը կիեռարձակվի երեկոյան, եւ դա է պատճառը, որ գերիների խնդրին չենք անդրադարձել»: Այս մասին գրել է «Հանրապետություն» կուսակցության նախագահ Արամ Սարգսյանը: «Չնայած համոզված եմ, որ հանրային անդրադարձը այդ թեմային էլ ավելի մեծ հնարավորություն է տալիս Իլհամ Ալիեւին՝ խնդիրը Արեւմուտքին ավելի թանկ «վաճառելու» առումով: Հետեւաբար՝ ո՞րը պետք է լինի մեր անելիքը: Պետք է ուժեղանալ՝ բառիս բուն եւ ամենալայն իմաստով: Գլուխներս կախ՝ ստեղծված իրավիճակից եւ մեզ մեկնած ձեռքից օգտվելով, մեր տնտեսությունը հզորացնենք, իսկ հավելյալ արդյունքը, մեծն Թումանյանի խոսքով, «քոռ ու փուչ» չանենք, այլ էլի եւ նորից ներդնենք անվտանգության ու տնտեսության մեջ: Իսրայելը իր գերիների համար անգամ մտավ Պաղեստին: Իսրայելը կարող է իրեն նման պահվածք թույլ տալ, քանի որ շուրջ 220 միլիարդի բյուջե ունի: ՀՀ-ն Իսրայել չէ, բայց կարող է, ունակ է եւ պարտավոր է ուժեղանալ, առավել եւս՝ հնարավորության դուռ կա, եւ՝ բաց դուռ: Ինչ վերաբերում է Բաքվում պահվող հայ ռազմագերիների դատավճռին, վստահ եմ՝ մեզնից ոչ ոք հույս չէր փայփայում, թե ադրբեջանական դատարանը արդարացման վճիռ կկայացնի: Անկախ վճռի խստությունից՝ ես վստահ եմ եւ համոզված, որ, բացի Ռուբեն Վարդանյանից, ում հարցը այլ հարթության մեջ է եւ առավելապես առնչվում է ՌԴ-ին, մյուս բոլորին ազատ կարձակեն եւ կարտահանձնեն ՀՀ-ին՝ որպես բարի կամքի դրսեւորում, խաղաղության համաձայնագրի ստորագրումից հետո, եւ տա Աստված, որ այդպես լինի…»,- գրել է նա:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԶՐՈՒՅՑ

«ԱՄՈԹԻ ԱՌԱՋԻՆ ԿՐՈՂԸ ՄԵՆՔ ԵՆՔ՝ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ»

Երեկ ԱԺ շենքի դիմաց (Բաղրամյան փողոցի մուտք) ՀՀԿ-ն նախաձեռնել էր ակցիա՝ ի պաշտպանություն հայաստանյան քաղբանտարկյալների եւ Քաքվի բանտերում ապօրինի պահվող մեր հայրենակիցների:

Հենց այդ ժամին ԱԺ-ում սպասվում էր ԵԽ մարդու իրավունքների հանձնակատարի այցն ու հանդիպումները: Ազգային Ժողովի «Հայաստան» խմբակցությունը երեկ կայացած ԱԺ Պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նիստում առաջարկեց «Հայաստանի Հանրապետությունում առկա քաղբանտարկյալների եւ նրանց խախտված իրավունքների վերականգնման մասին» հայտարարության նախագիծ:

«Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է ՀՀԿ փոխնախագահ Արմեն Աշոտյանի հետ:

-Պարոն Աշոտյան, խոսելով այսօրվա մասին՝ որքա՞ն կարեւոր է ակցիան եւ ի՞նչ ակնկալիքներ ունեք դրանից:

-Այսօր ամոթի օր է, ամոթի օր է ամեն օրը, երբ ունենք քաղբանտարկյալներ: Ամոթ է ողջ ժողովրդին, որ հանդուրժում է իր պայծառ զավակների բանտարկությունը այդ նույն ժողովրդի ապագայի, հավատամքի եւ արժանապատվության համար:

Ամոթանք պետք է տանք նաեւ եվրոպական կառույցներին, բայց եկեք անկեղծ խոստովանենք, որ ամոթի առաջին կրողը մենք ենք՝ հայ ժողովուրդը, որ դեռեւս չի հաջողել ոչ միայն փոխել այս խայտառակ իշխանությանը, այլեւ բանտերից ազատել իր լավագույն զավակներին

-Ո՞րն է քաղաքական նպատակահարմարությունը այս փուլում, արդյոք արեւելք-արեւմուտք գծի վրա բերել Հայաստանը՝ կտրելով հյուսիս-հարավից:

-Կարող եմ երկար խոսել աշխարհաքաղաքական փոփոխությունների, Հայաստանի դերի եւ ակնկալվող զիջումների նպատակահարմարության մասին, բայց չեմ ուզում կենտրոնանալ հենց այդ խնդրի վրա, թեպետ այն կա: Հայաստանը այսօրվա ղեկավարության դեմքով ներկայանում է աշխարհին եւ հատկապես արեւմտյան երկրներին որպես ամեն ինչի պատրաստ երկիր: Երկիր, որ պատրաստ է սեփական շահերը ուրանալ, սեփական արժեքները մոռանալ:

Հակառուսականություն կարող է լինել տարբեր երկրներում, տարբեր երկրներում այդ հակառուսականությունը կա: Բոլոր երկրներում, բացի Հայաստանից, հակառուսականությունը ազգային է, այսինքն ուղեկցվում է ազգայինի արժեւորմամբ, ազգայինի մասին քարոզչությամբ: Միակ երկիրը, որի գլխին ջարդվում է ապազգային հակառուսականությունը, դա Հայաստանն է:

-Ինչո՞ւ:

-Կարելի է լինել լիբերալ եւ արեւմտամետ, բայց լինել ազգային, ինչպես բազմաթիվ քաղաքական գործիչներ:

Ակնհայտ է, որ հիմնական թիրախը ապազգայնությունն է, ոչ թե գեոպոլիտիկան: Հայաստանի այսօրվա իշխանությունների համար ամենակարեւոր բանը ջնջել հայի օպերատիվ հիշողությունը:

-Խոսելով գերիների այսօրվա վիճակի եւ դրան զուգահեռ եվրոպական կառույցների անտարբերության մասին՝ ի՞նչ կարող եք ասել:

-25 տարի առաջ Հայաստանն անդամակցեց Եվրոպայի խորհրդին: Այն ժամանակ մենք հույս ունեինք, որ եվրոպական ինտեգրման ճանապարհը որքան էլ դժվար լինի անցնել, մեր երկրին բերելու է ազատություն, արժանապատվություն, հավասարություն, բարեկեցություն: 25 տարի անց փաստում ենք, որ այդ ամենը փուչիկ է, որ այդ ամբողջը կեղծ է, ցինիկություն է:

Եվրոպական կառույցները՝ Եվրոպական խորհրդից մինչեւ Եվրոպական հանձնաժողով, Եվրոպական պառլամենտից մինչեւ Եվրոպական օմբուդսմեն, կույր են, խուլ են եւ համր, երբ խոսքը ՀՀ-ում իրենց իսկ դավանած, քարոզած արժեքների պաշտպանության մասին է:

Զրուցեց ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԸ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳ

ԻՆՉԻ ՊԵՏՔ Է ՀԱՆԳԵՑՆԵՆ

Հայաստանը՝ որպես ՄԱԿ Զարգացման ծրագրի (UNDP), Բնակչության հիմնադրամի (UNFPA) եւ Ծրագրերի ծառայությունների գրասենյակի (UNOPS) Գործադիր խորհրդի նոր անդամ, մասնակցել է Գործադիր խորհրդի առաջին հերթական նստաշրջանին: Այս մասին հայտնում են ՄԱԿ-ում ՀՀ մշտական ներկայացուցչությունից: Նշվում է, որ ՄԱԿ-ում Հայաստանի Հանրապետության մշտական ներկայացուցիչ, դեսպան Պարույր Հովհաննիսյանը հանդես է եկել հայտարարություններով՝ ՄԱԿUN80 նախաձեռնության, ինչպես նաեւ ՄԱԿ Զարգացման ծրագրի ադմինիստրատորի եւ ՄԱԿ Բնակչության հիմնադրամի Գործադիր տնօրենի հետ հանդիպումների շրջանակներում:

«Հայաստանն ընդգծեց, որ ՄԱԿ բարեփոխումները պետք է լինեն անդամ պետությունների կողմից առաջնորդվող, գործնական եւ տվյալների վրա հիմնված՝ միաժամանակ բարձրացնելով արդյունավետությունն ու ազդեցությունը եւ ապահովելով ծրագրային երկրների համար հուսալի աջակցություն: Բարեփոխումները պետք է հանգեցնեն շոշափելի արդյունքների տեղում՝ համահունչ ազգային առաջնահերթություններին»,-ասված է ներկայացուցչության տարածած հաղորդագրության մեջ: Առանձնակի ընդգծվել է UNDP-ի կենտրոնական դերը՝ ինտեգրված եւ արձագանքող զարգացման լուծումների գործում, հատկապես հատուկ իրավիճակում գտնվող եւ միջին եկամուտ ունեցող երկրների համար:

Հաղորդվում է, որ դեսպան Պարույր Հովհաննիսյանը վերահաստատել է Հայաստանի աջակցությունը UNFPA-ի աշխատանքին, մասնավորապես հումանիտար եւ զարգացման ոլորտներում օգնության տրամադրման ուղղությամբ: «Շեշտվեց UNFPA-ի դերը կանանց եւ երիտասարդների հզորացման, գենդերային բռնության դեմ պայքարի, հաշմանդամություն ունեցող անձանց ներառականության ապահովման եւ խոցելի խմբերին աջակցման գործում»,-հայտնում է մշտական ներկայացուցչությունը: Ընդգծվում է, որ Հայաստանը վերահաստատել է իր հանձնառությունը առաջիկա տարիներին Գործադիր խորհրդի աշխատանքներին կառուցողական ներգրավվածություն ունենալու հարցում:

ԲՅՈՒՋԵԻ ՀԱՇՎԻՆ ԲՆԱԿԱՐԱՆ

Ռազմաուսումնական հաստատությունից հետո Պաշտպանության նախարարությունում կամ Ազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքերում ծառայության անցած որոշ զինծառայողներ պետական բյուջեի հաշվին բնակարան ձեռք բերելու հնարավորություն կստանան: Նախագիծը կառավարության նիստում ներկայացրեց Պաշտպանության նախարարի տեղակալ Հրաչյա Սարգսյանը:

«2022-2023 ուսումնական տարվանից սկսած ռազմաուսումնական հաստատությունում ուսումնառություն եւ հետուսումնական պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու պայմանագիր կնքած, ռազմաուսումնական հաստատությունն ավարտած եւ ՊՆ համակարգում կամ ԱԱԾ սահմանապահ զորքերում սպայական պաշտոնի նշանակված, սպայական կազմի զինծառայողների համար օրենքով նախատեսված բնակապահովման շրջանակներում արտոնյալ պայմաններով հիպոթեկային վարկավորման նպատակային ծրագիրը հնարավորություն է տալու սպայական կազմի զինծառայողներին ամբողջությամբ պետական բյուջեի միջոցների հաշվին ֆինանսավորման հիման վրա սեփականության իրավունքով ձեռք բերել բնակարան: Վարկը, կանխավճարը, մայր գումարն ու տոկոսներն ամբողջությամբ մարվելու են պետական բյուջեի միջոցների հաշվին»,- ասաց Սարգսյանը:

Նախարարի տեղակալը հավելեց՝ քաղաքացիներին, որոնք կընդունվեն ռազմաուսումնական հաստատություն, կավարտեն, կնշանակվեն Պաշտպանության նախարարության համակարգում կամ Ազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքերում ծառայության, կտրամադրվեն հավաստագրեր, որոնց միջոցով նրանք հնարավորություն կունենան ընտրել իրենց բնակարանը կամ բնակելի տունը՝ առաջնային կամ երկրորդային շուկայից: «Սեփականության իրավունքով է տրամադրվելու, բայց պայմանով, որ նվազագույնը 20 տարի պետք է ծառայություն իրականացնի: Հասանելի գումարը 35 մլն դրամի չափով է: Զինծառայողները հնարավորություն կունենան այս գույքը ձեռք բերել ոչ միայն Երեւանում, այլեւ մարզերում»,- նշեց Հրաչյա Սարգսյանը:

20 տարվա պարտադիր ծառայության պայմանի մեջ կներառվի նաեւ ռազմաուսումնական հաստատությունում ուսումնառության ընթացքը:

ԱԺ-Ի ԲԱՑԱՍԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Փետրվարի 5-ին Ազգային ժողովի պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նիստում քննարկվել է խորհրդարանական ընդդիմության պատրաստած «Հայաստանի Հանրապետությունում քաղբանտարկյալների եւ նրանց խախտված իրավունքների վերականգնման մասին» Ազգային Ժողովի հայտարարության նախագիծը: Հայտարարության նախագիծը ներկայացրել է ընդդիմադիր «Հայաստան» խմբակցության պատգամավոր Էլինար Վարդանյանը:

Հայտարարության նախագծում, մասնավորապես, նշվում է, որ այսօր Հայաստանում կա ավելի քան 60 քաղբանտարկյալ: Նրանք, ինչպես կարծում են ընդդիմությունում, ենթարկվել են քրեական հետապնդման այս կամ այն քաղաքական դրդապատճառներով: Ընդ որում, շուրջ 40 մարդ գտնվում է կա՛մ կալանքի տակ, կա՛մ տնային կալանքի մեջ:

Պատգամավորի խոսքով՝ Հայաստանում նկատվում է ժողովրդավարական հետընթաց եւ քաղբանտարկյալների աննախադեպ թիվը դրա վառ ապացույցն է:

«Այս հայտարարության նախագծի պատրաստման հիմք է հանդիսացել Հայաստանում ժողովրդավարության հետընթացը, որի անբաժանելի մասն են կազմում խոսքի, խղճի, հավաքների ազատության կոպիտ խախտումները, ինչպես նաեւ զանգվածային լրատվամիջոցների նկատմամբ ճնշումները, շինծու քրեական գործերը, տարբեր գործիչների եւ այլ քաղաքական հայացքներ ունեցող քաղաքացիների նկատմամբ ընտրովի արդարադատությունը», - նշել է Վարդանյանը:

Իր հերթին, մշտական խորհրդարանական հանձնաժողովի ղեկավար, իշխող «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Վլադիմիր Վարդանյանը համաձայն չէր այս արդարացումների եւ պնդումների հետ՝ դրանք անվանելով անհիմն:

Արդյունքում, մշտական խորհրդարանական հանձնաժողովը բացասական արձագանք է հայտնել ընդդիմության հայտարարության նախագծի վերաբերյալ:

ՌԱԶՄԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Թուրքիայի նախագահ Էրդողանի՝ Կահիրե կատարած այցի շրջանակներում Թուրքիայի եւ Եգիպտոսի միջեւ ստորագրվել են մի շարք երկկողմ համաձայնագրեր, հայտնում են թուրքական լրատվամիջոցները:

Կողմերը ստորագրել են ռազմական շրջանակային համաձայնագիր, ինչպես նաեւ այլ ոլորտներում համագործակցության զարգացման վերաբերյալ փաստաթղթեր:

Բանակցությունների արդյունքում երկրները նպատակ են դրել երկկողմ ապրանքաշրջանառությունը 9 միլիարդ դոլարից հասցնել 15 միլիարդ դոլարի:

ԽՍՏԱՑԲԵԼ Է ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Վերջին տարիներին Հեռուստատեսության եւ ռադիոյի հանձնաժողովը զգալիորեն ավելացրել է վերահսկողական վարույթների քանակը:

Երեկ՝ փետրվարի 5-ին՝ մամուլի ասուլիսի ժամանակ, այս մասին հայտարարեց Հեռուստատեսության եւ ռադիոյի հանձնաժողովի նախագահ Տիգրան Հակոբյանը:

Նրա խոսքով՝ միայն 2025 թվականին հանձնաժողովը նախաձեռնել է 84 վարչական վարույթ, մինչդեռ 2011-2018 թվականների ընթացքում դրանց թիվը կազմել է ընդամենը 15:

«2019 թվականից մինչեւ նախորդ տարի մենք նախաձեռնել ենք մոտ 400 վարույթ, որոնց արդյունքում որոշ լրատվամիջոցներ ենթարկվել են պատժամիջոցների՝ ֆինանսական տուգանքներից մինչեւ հաղորդումների կասեցում»,- նշեց Հակոբյանը:

Հանձնաժողովի նախագահը պարզաբանեց, որ իրականացվող վարչական վարույթների մեծ մասը բովանդակային բնույթ ունի եւ ուղղված չէ խոսքի ազատության սահմանափակմանը:

«Վարույթների մի մասը վերաբերում է հեղինակային իրավունքի խախտումներին: Սա մեզ համար կարեւոր է, քանի որ Հայաստանն ունի նաեւ միջազգային պարտավորություններ: Երբ տնտեսավարող սուբյեկտները ծախսեր են կատարում՝ բովանդակություն ձեռք բերելու կամ արտադրելու համար, եւ որեւէ հեռարձակող առանց պայմանագրի սկսում է այդ բովանդակության անօրինական տարածում, դա վնաս է հասցնում օրինական գործող սուբյեկտներին»,-ընդգծեց նա:

Տիգրան Հակոբյանի խոսքով՝ վարույթների մի մասն էլ առնչվում է բռնության տեսարանների ցուցադրմանը, ծխախոտի եւ ալկոհոլային խմիչքների գովազդին, առանց լիցենզիայի դեղամիջոցների տարածմանը, ինչպես նաեւ հաղորդումներից առաջ օրենքով սահմանված նախազգուշացումների բացակայությանը:

«Այս պատժամիջոցները հանրօգուտ բնույթ ունեն, քանի որ մենք չենք կարող թույլ տալ այնպիսի գովազդ կամ բովանդակություն, որը վնասում է քաղաքացիների ֆիզիկական եւ հոգեւոր առողջությանը»,-նշեց նա:

Հակոբյանը վստահեցրեց, որ հանձնաժողովի կողմից կիրառված որեւէ պատիժ նպատակ չի ունեցել սահմանափակելու խոսքի ազատությունը, եւ ընդգծեց, որ իրականացված վերահսկողությունը չի խաթարել հանձնաժողովի եւ հեռարձակողների հարաբերությունները:

«Մենք լավ ենք իրար հասկանում, եւ մեր քայլերի արդյունքում վերջին տարիներին էականորեն նվազել են հեղինակային իրավունքի խախտումները: Ավելին, մեր միջազգային գործընկերներից ստանում ենք շնորհակալական նամակներ անզիջում պայքարի համար, ինչը խոսում է նաեւ Հայաստանի հեղինակության մասին միջազգային ասպարեզում»,-եզրափակեց հանձնաժողովի նախագահը:

ՇԻՆԾՈՒ «ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ»

ԲԱՔՈՒՆ ՀՐԱՊԱՐԱԿԵԼ Է «ԴԱՏԱՎՃԻՌՆԵՐԸ»

Քաֆուն հրապարակել է Արցախի ռազմաքաղաքական ղեկավարության եւ մյուս հայ գերիների ծանր դատավճիռները:

Բաքվի զինվորական դատարանում կայացած բաց դատական նիստի ժամանակ հրապարակվել են Արայիկ Հարությունյանի, Լյովա Մնացականյանի, Դավիթ Մանուկյանի, Արկադի Ղուկասյանի, Բակո Սահակյանի, Դավիթ Բաբայանի եւ մյուս հայ գերիների դատավճիռները:

Ըստ հրապարակված դատավճռի՝ Արցախի Հանրապետության 3-րդ նախագահ Արայիկ Հարությունյանը, Արտաքին գործերի նախկին նախարար Դավիթ Բաբայանը, Ազգային Ժողովի նախկին նախագահ Դավիթ Իշխանյանը, գեներալ-մայոր Դավիթ Մանուկյանը եւ Արցախի Հանրապետության Պաշտպանության նախկին նախարար, Պաշտպանության բանակի նախկին հրամանատար ու գեներալ-լեյտենանտ Լյովա Մնացականյանը դատապարտվել են ցմահ ազատազրկման:

Արցախի Հանրապետության երկրորդ եւ երրորդ նախագահներ Արկադի Ղուկասյանը եւ Բակո Սահակյանը դատապարտվել են 20 տարվա ազատազրկման:

Նշենք, որ ավելի վաղ դատախազը նշել էր, թե իբր Արկադի Ղուկասյանը եւ Բակո Սահակյանը եւս մեղադրվում են ցմահ ազատազրկում նախատեսող հանցագործությունների մեջ, սակայն, քանի որ նրանք 65 տարեկան են, միջնորդել էր նրանց դատապարտել 20 տարվա ազատազրկման՝ համաձայն Ադրբեջանի քրեական օրենսգրքի պահանջների: Բաքուն հրապարակել է նաեւ մյուս գերիների դատավճիռները, ըստ որի՝ Մադաթ Բաբայանը եւ Մելիքսեթ Փաշայանը դատապարտվեցին 19 տարվա ազատազրկման, Դավիթ Ալավերդյանը՝ 16 տարվա ազատազրկման:

Հիշեցնենք, որ նրանք գերեվարվել էին Արցախի վերջին պատերազմից հետո՝ Արցախի հայաթափման ժամանակ՝ 2023 թվականի սեպտեմբերին, եւ մինչեւ հիմա Բաքվի բանտում տեղի էր ունենում շինծու «դատավարություն»:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

ԱՄՆ պետքարտուղարության «Գլոբալ ենթակառուցվածքների ու ներդրումների շուրջ գործակցության հիմնադրամի» պատվիրակմամբ Հայաստան է այցելել ամերիկյան AECOM ճարտարագիտախորհրդատվական ընկերության թիմը՝ սկսելու ԹՐԻՓՓ-ի տեղանքի հետազոտման աշխատանքները: Այս մասին հայտնել է ՀՀ-ում ԱՄՆ դեսպանությունը: «Այս աշխատանքները կներառեն տեխնիկատնտեսական գնահատում եւ առաջարկների մշակում երկաթուղու եւ այլ ենթակառուցվածքների ձեւավորման վերաբերյալ, որոնք կօգնեն խթանել երկարաժամկետ տնտեսական աճ Հայաստանում, փոխկապակցվածություն եւ տարածաշրջանային ինտեգրում»,- ասված է հաղորդագրության մեջ: Հայաստանն ու ԱՄՆ-ն հունվարի 14-ին հրապարակել էին ԹՐԻՓՓ-ի իրականացման շրջանակի վերաբերյալ համատեղ հայտարարությունը:

ԽՆԴՐԻ ԼՈՒԾՈՒՄ

«Մաքսային կարգավորման մասին» օրենքում լրացմամբ առաջարկվում է լուծել սահմանային անցման կետերում կուտակումների խնդիրը: Այս մասին ասել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ Համլետ Սահակյանը Տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի՝ փետրվարի 4-ի նիստում:

Նախագծով Կառավարությունն առաջարկում է ներդնել Հայաստանի Հանրապետությունից մեկնող բեռնատարների կառավարման համակարգ:

Ջեկուցողի խոսքով՝ հերթերի կառավարման համակարգ ներդնելու մասով ուսումնասիրվել է Եվրամիության եւ Վրաստանի փորձը: Նաեւ հարցում է իրականացվել բեռնափոխադրմամբ զբաղվող տնտեսավարողների շրջանում, որին մասնակցել է 45 սուբյեկտ: «Հարցվածների շուրջ 87 տոկոսը պատասխանել է, որ հաճախ են հանդիպում հերթերի ցամաքային անցման կետերում, իսկ շուրջ 62 տոկոսը նշել է՝ հերթի սկզբից մինչեւ մաքսային կետ մուտք գործելու տեւողությունը միջինում կազմում է 3 ժամ»,- տեղեկացրել է Համլետ Սահակյանը՝ հավելելով, որ հարցվածների 73 տոկոսն էլ ընդգծել է, որ ցամաքային անցման կետերի մոտակայքում առկա է բեռնատար տրանսպորտային միջոցների վճարովի կայանատեղիի անհրաժեշտություն:

Նշված խնդիրը կարգավորելու նպատակով առաջարկվում է պետական սահմանի ավտոմոբիլային անցման կետերից ոչ ավելի, քան 20 կմ հեռավորության վրա նախատեսել վճարովի կայանատեղիների կազմակերպման գործունեություն, որի շրջանակում կգործի հերթերի կառավարման ավտոմատ էլեկտրոնային համակարգ՝ բեռնատար տրանսպորտային միջոցների շարժի հաշվառման, հերթագրման, անցման կետ մուտք գործելու թույլտվության տրամադրմանն ուղղված անհրաժեշտ տեղեկատվության փոխանակման նպատակով: Նախատեսվում է, որ Կառավարության կողմից կսահմանվեն հերթերի կառավարման համակարգին միանալու կարգը, կուտակային կայանատեղիների կազմակերպման գործունեություն իրականացնողներին ներկայացվող պահանջները, ՀՀ-ից մեկնող բեռնատար տրանսպորտային միջոցների կուտակային կայանատեղիներում հերթագրման ծառայության վճարի առավելագույն չափը, հերթերի կառավարման համակարգին միանալու նպատակով ներկայացվող դիմումի բովանդակությունը եւ այլն:

Առաջին ընթերցմամբ քննարկված նախագիծն արժանացել է հանձնաժողովի հավանությանը:

ՄԵՂԱԴՐԱՆՔ Է ԱՌԱՋԱԴՐՎՈՒՄ

ՌՈՄԱՆՈՍ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ՄԱԿԱՆՈՒՆՈՎ ՀԱՅՀՈՅԵԼ ԵՆ

Էրեբունի վարչական շրջանում բաղաքացիներին ահաբեկում են ու մեղադրանքներ առաջադրում. ի՞նչ է կատարվում:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ տեւական ժամանակ է, ինչ Էրեբունի վարչական շրջանում էլեկտրաէներգիայի մատակարարման անջատումները խիստ վրդովմունք են առաջացրել բնակիչների շրջանում: Արդյունքում քաղաքացիներից շատերը ահազանգել են Հայաստանի էլեկտրական ցանց եւ հետաքրքրվել, թե ինչով են պայմանավորված անջատումները: Ի պատասխան՝ ՀԷՑ-ից հայտնել են, որ վթար է: Իրավիճակը այնքան է թեժացել, եւ Հայաստանի էլեկտրական ցանցերի անջատումները այնքան պարբերական են եղել, որ բնակիչները զայրացած զանգահարել են ՀԷՑ եւ հայտարարել, թե ինչքան կարող են դիմանալ այս անջատումներին, ինչու կառավարումը ճիշտ չի իրականացվում:

Եւ ահա հերթական անգամ բնակիչների վրդովմունքն ու զայրույթը այն աստիճանի է հասել, որ ՀԷՑ-ից պատասխանել են, թե կարող եք բողոք ներկայացնել վերադասին:

««Ում կարող եմ բողոքել»,- հարցրել է քաղաքացին:

««ՀԷՑ ղեկավարությանը»:

««Ռոմանոս Պետրոսյանի՞ն, էդ...»»,- զայրացած հարցրել է քաղաքացին՝ հնչեցնելով Ռոմանոս Պետրոսյանի մականունը եւ հայհոյելով նրան:

Մեկ այլ քաղաքացի էլ զանգահարել է ՀԷՑ ու իրավիճակից վրդովված՝ հայհոյել Նիկոլ Փաշինյանին:

Արդյունքում ՀԷՑ-ի աշխատակիցները քաղաքացիներին պատասխանել են, թե ձայնագրությունը կտան իրավապահներին: Իրավապահներն էլ, զայրացած արձագանքները լսելով, սկսել են քաղաքացիներին ահաբեկել ու մեղադրանք առաջադրել խուլիգանության համար: ArmLur.am-ը տեղեկացավ, որ այս պահին 4 քաղաքացու մեղադրանք է առաջադրված խուլիգանության համար:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ՀԱՎԵԼԱՎՃԱՐ Է ՈՒՋՈՒՄ

Շռայլ պարգեւավճարներից հետո դատավորները ոտքի են կանգնել: Մինչ Ամանորի նախաշեմին պետական կառավարման համակարգում շռայլ պարգեւավճարներ էին բաժանվում, գործընթացը, կարծես, դարձել է վարակիչ:

Հիշեցնենք, որ պաշտոնական հրապարակումներով հայտնի դարձավ՝ վարչապետը ստացել է մոտ 15 մլն դրամի, իսկ նախարարները՝ 8-10 մլն դրամի պարգեւավճարներ այն պայմաններում, երբ հասարակության 21,7% հատվածը աղքատ է: Փաշինյանի 1 օրում ստացած պարգեւավճարը 1 թոշակառուի 11 տարվա թոշակն է: Այս ամենը տեսնելով՝ դատական համակարգը եւս չի ցանկանում հետ մնալ:

ArmLur.am-ը պաշտոնական աղբյուրներից տեղեկացավ, որ ՀՀ վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի դատավոր Լիպարիտ Մելիքջանյանը դատի է տվել ՀՀ Բարձրագույն դատական դեպարտամենտին՝ պահանջելով տարիներ առաջ իրեն չվճարված հավելավճարների հատուցում: Խոսքը վերաբերում է այն ժամանակահատվածին, երբ նա եղել է Բարձրագույն դատական խորհրդի անդամ եւ այժմ պահանջում է պետությունից վճարել իրեն հասանելիք գումարները: Ստացվում է, որ երբ գործադիր իշխանությունը առանց զսպումների պարգեւավճարներ է բաժանում, դատական համակարգն էլ սկսում է իր բաժինը պահանջել բյուջեից:

Ք. Մ.

ՄԵԹԱՄՖԵՏԱՄԻՆ

ՊԾ Երեւան քաղաքի գնդի 2-րդ գումարտակի 1-ին վաշտի ծառայողները փետրվարի 3-ին Բագրատունյաց պողոտայում ստուգման նպատակով կանգնեցրել են «ԲՄՎ» մակնիշի մեքենան: Ստուգմամբ պարզվել է, որ 37-ամյա ուղեւորը հունվարի 30-ից Քրեական ոստիկանության Երեւան քաղաքի վարչության կողմից հետախուզվում էր խարդախության, փողերի լվացման, փաստաթղթերի կեղծիքի եւ անձնական կամ ընտանեկան կյանքի գաղտնիությունը խախտելու մեղադրանքներով:

37-ամյա տղամարդը ձերբակալվել եւ տեղափոխվել է Համայնքային ոստիկանության Շենգավիթի բաժին: Նրա անձնական խուզարկությամբ հայտնաբերվել է մեթամֆետամին տեսակի թմրամիջոց:

Երեւանի բնակիչ 37-ամյա տղամարդը կազմված փաստաթղթերի հետ ներկայացվել է նախաքննական մարմին:

ԿԱՍԵՑՎԵԼ Է

ՀՀ Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կողմից իրականացվող վերահսկողական գործողությունների շրջանակում հեղուկացված ածխաջրածնային գազի եւ բենզինի մանրածախ վաճառքով զբաղվող «ՄԿՕԻԼ» ՍՊԸ-ին պատկանող լցակայանում (հասցե՝ ք. Երեւան, Եղվարդի խճ., 115) հայտնաբերվել են խախտումներ:

Ստուգմամբ պարզվել է, որ ընկերությունը շահագործում է չստուգաչափված չափիչ միջոցներ, որի արդյունքում կասեցվել է հեղուկացված ածխաջրածնային գազի եւ ավտոմոբիլային բենզինի 3 վառելիքաբաշխիչ աշտարակների գործունեությունը՝ մինչեւ հայտնաբերված խախտումների վերացումը:

Արձանագրված իրավախախտումների համար տնտեսվարող սուբյեկտը կենթարկվի վարչական պատասխանատվության՝ օրենքով սահմանված կարգով:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ԿԱԾԱՌՔԻ ՓՈՐՁ

ՊԾ Երեւան քաղաքի գնդի 2-րդ գումարտակի 1-ին վաշտի պարեկները փետրվարի 3-ին Իսակովի պողոտայում ստուգման նպատակով կանգնեցրել են «ԲՄՎ» մակնիշի մեքենան: Վարորդի սթափության վիճակը ստուգելու ժամանակ 34-ամյա ուղեւորը փորձել է կաշառել պարեկներին:

Կաշառք տալու անմիջականորեն ծագած կասկածի հիմքով նա ձերբակալվել եւ տարվել է Համայնքային ոստիկանության Մալաթիայի բաժին:

Ուղեւորը եւ կազմված փաստաթղթերը ներկայացվել են նախաքննական մարմին:

ՄԱՐԻԽՈՒԱՆԱ

Փետրվարի 3-ին Քրեական ոստիկանության Տավուշի մարզային վարչությունում օպերատիվ տեղեկություն է ստացվել, որ Գետահովիտ գյուղի բնակիչ 66-ամյա մի տղամարդ «Դարբանդ» կոչվող տարածքում աճեցրել է կանեփ, պատրաստել թմրանյութ եւ այն պահում է իր տանը:

Նույն օրը նա հրավիրվեց վարչություն եւ խոստովանեց:

Նախաձեռնված քրեական վարույթի շրջանակում տղամարդու տանը կատարված զննությամբ հյուրասենյակում եւ նկուղում հայտնաբերվեց ընդհանուր մոտ 133 գրամ մարիխուանա:

ՀԱՆՑԱՎՈՐ ԽՈՒՄԲ

ՆԳՆ Քրեական ոստիկանության գլխավոր եւ Լոռու մարզային վարչությունների ծառայողները համատեղ ձեռնարկած ծավալուն օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզել են, որ մի խումբ անձինք, ստեղծելով հանցավոր խումբ եւ ձեռք բերելով ապօրինի զենք-զինամթերք, նախապատրաստել են սպանություններ, կատարել ավազակային հարձակում եւ բնակարանային գողություններ: Միջամտելով տարբեր անձանց միջանձնային ու ֆինանսական խնդիրներին՝ դիմել են, այսպես կոչված, քրեական հեղինակության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձանց, ինչպես նաեւ մասնակցել են քրեական ենթամշակույթ կրող խմբավորման հավաքներին ու գործողություններին:

Նախաձեռնվել է քրեական վարույթ: Հանցավոր խմբի անդամներին մեղադրանքներ են առաջադրվել սպանության նախապատրաստության, սպանության փորձի, քրեական ենթամշակույթ կրող խմբավորմանը մասնակցելու, ապօրինի զենք-զինամթերք կրելու, խուլիգանության, ավազակության, գողության, գույք ոչնչացնելու կամ վնասելու եւ թմրամիջոցներ իրացնելու հատկանիշներով:

Ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում հանցավոր խմբի անդամները հայտնաբերվել եւ ձերբակալվել են:

Քննչական կոմիտեի ծառայողների հետ համատեղ կատարված խոշորամասշտաբ խուզարկություններով նրանց բնակության վայրերում հայտնաբերվել են ապօրինի զենք-զինամթերք եւ թմրամիջոցներ:

Հանցավոր խմբի 10 անդամների նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում: Կատարվում է նախաքննություն:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ նախորդ երեք օրերի ընթացքում հայտնաբերվել է 11 հետախուզվող, կամավոր ներակայցել՝ 2-ը:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

894 ՄԻԼԻՈՆ ԴՐԱՄԱՆՈՑ ԾՐԱԳԻՐ

Դիլիջան քաղաքի Գետափնյա փողոցի ասֆալտապատման, մայթերի եւ փողոցին կից շենքերի բակերի բարեկարգման, փողոցի ջրահեռացման եւ այլ աշխատանքների ծրագրի ժամկետը, նախագծային աշխատանքները խախտվել են: Այդ ծրագիրը սուբվենցիոն է, արժեքի 60 տոկոսը ներդրել է համայնքը, 40 տոկոսը՝ պետական բյուջեն: Հանրային հեռուստաընկերության 2025թ. հուլիսի 21-ի լուրերի թողարկման մեջ ցուցադրված ռեպորտաժում ասվում է, որ այդ ծրագրի արժեքը 894 միլիոն դրամ է, մեկնարկը տրվել է 2024-ին:

Ծրագրի պայմանագիրը կնքվել է 2023թ. հուլիսի 10-ին: Աշխատանքներն իրականացնում է «Ծովագյուղի ՃՇՇ» ՍՊԸ-ն: 2026 թվականն է, իսկ այդ փողոցի 2,4 կմ երկարությամբ ասֆալտապատման եւ այլ գործերը մնում են, 2025-ի դեկտեմբերին ասֆալտի մի շերտն է արվել, ասֆալտի 2-րդ շերտ դեռ պետք է փռվի: Ծրագրով նախատեսված է անձրեւաջրերի հեռացման համար խողովակների տեղադրում, հիդրոտեխնիկական կառույցների կառուցում: Նման աշխատանքների դեպքում ծրագիրը պետք է ընդգրկվեր ՀՀ կառավարության 2015թ. մարտի 19-ի N 596-Ն որոշման N 4 հավելվածի N 3 ցանկի 4-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված օբյեկտների ցանկում, որոնք ենթակա են պետական համալիր փորձաքննության: Այդ օբյեկտները համարվում են 4-րդ կարգի բարդության, դրանց նախագծերը կազմվում են նախագծողների խմբի, ոչ թե մեկ նախագծողի կողմից, 4-րդ կարգի օբյեկտների նախագծերը պետք է պարտադիր քաղաքաշինության կոմիտեում համալիր փորձաքննության ենթարկվեն, սակայն Գետափնյա փողոցի ծրագիրը 4-րդ կարգի օբյեկտ չեն համարել, այն փորձաքննություն չի անցել:

Ծրագրով կատարված գնումների գները մեծ չափով ուռճացած են, ձեռք են բերվել ավելի քան 150 հատ 1,5մ x 1,5մ չափերով բետոնյա դիտահորերի ծածկի չուգունե սալեր, յուրաքանչյուրը 175 հազար դրամով: Շինարարական նյութերի գների ինտերնետային կայքերում նման չափի եւ տվյալների դիտահորի ծածկի գինը 104 հազար դրամ է, մեծաքանակ գնման դեպքում այդ գինը պետք է իջներ: Նախագծով սելավատար 6մ երկարությամբ, 300 միլիմետրանոց պոլիէթիլենային խողովակի գինը սահմանված է 14 հազար դրամ, այն գնվել է 10 հազար 500 դրամով, մինչդեռ այդ խողովակի շուկայական գինը 8 հազար դրամ է, մեծաքանակ գնման դեպքում գինը կնվազեր:

Ըստ նախագծի՝ անձրեւաջրերը դեպի Աղստեւ գետ ուղղող 3300 գծամետր խողովակ պետք է անցկացվեր, սակայն ըստ աշխատանքների կատարողական ակտերի՝ տեղադրվել է 940 գծամետր խողովակ: Նախագծով նախատեսված է 2,4 կմ երկարությամբ, ամբողջական գծով ջրահեռացման խողովակների տեղադրում, սակայն այն արել են հատվածաբար, որի հետեւանքով ոչ թե նախագծով նախատեսված 2 տեղ են ծակել գետափնյա հենապատը, այլ 10-ից ավելի տեղեր:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԶԱՎԵՇՏԱԼԻ ԳՆՈՒՄՆԵՐ

6 ՄԼՆ 140 ՀԱԶԱՐ ԴՐԱՄ ԱՐԺԵՔՈՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՀՀ պետական գնումներում զավեշտալի իրերի շաս կարող եք հանդիպել, օրինակ՝ տիկնիկ, չիր, կոնյակ, շարֆ, միլիոնավոր գրիչներ, որոնց արժեքը շուկայականից հաճախ խիստ տարբեր է:

Նման մի հետաքրքիր գնում ArmLur.am-ը նկատել է ՀՀ վարչապետի աշխատակազմի գնումներում:

Օրերս վարչապետի աշխատակազմը 6 մլն 140 հազար դրամ արժեքով պայմանագիր է կնքել Վահան Ազիբեկյան Հակոբի ԱՁ-ի հետ եւ ձեռք բերել «տեսաֆիլմերի արտադրության ծառայություններ»:

Համաձայն պայմանագրի տեխնիկական բնութագրի՝ կինո եւ տեսաֆիլմերի արտադրության ծառայությունները իրենցից ենթադրում են ռիլային (reels) տեսանյութերի պատրաստում, իսկ կատարողը պարտավոր է տրամադրել պատվիրատուին 60 ռիլ տեսանյութ:

«Ռիլային տեսանյութերի տեւողությունը՝ յուրաքանչյուրն առնվազն 1 րոպե 30 վայրկյան, առավելագույնը՝ 2 րոպե 30 վայրկյան, չափը՝ 1080x1920 px՝ ինստագրամյան հարթակի բոլոր պահանջներին համապատասխան:

Տեսանյութերը պետք է նկարահանվեն հատուկ տեսախցիկի, iOS կամ Android վերջին սերնդի թողարկումներով:

Տեսանյութերը կարող են պարունակել բացօթյա եւ փակօթյա նկարահանումներ Երեւանում եւ Հայաստանի մարզերում, դրանից կադրեր, տեքստեր, ֆիլտրեր, AI լուծումներ, տարբեր էֆեկտներ, ստեղծագործական լուծումներ, մոնտաժ, հեղինակային իրավունքի պահպանմամբ երաժշտություն»,- ասվում է պայմանագրի տեխնիկական բնութագրում:

Սահմանվում է, որ տեսանյութերը պետք է նկարահանվեն հատուկ սցենարով reelmaker-ի կողմից, ով պետք է ունենա առնվազն 2 տարվա աշխատանքային փորձ եւ մասնագիտական պորտֆոլիո՝ առնվազն 40 հրապարակված ռիլերով:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՀԱՆԴԻՊԵԼ Է

Գերմանիայի կանցլեր Ֆրիդրիխ Մերցը եւ նրան ուղեկցող պատվիրակությունը պաշտոնական այցով ժամանել են Սաուդյան Արաբիայի մայրաքաղաք Ռիադ: Այս մասին հայտնում է Saudi Press Agency-ն:

Գերմանիայի կանցլերը Ռիադում հանդիպել է թագաժառանգ Մուհամմադ բին Սալմանի հետ: Բանակցություններում քննարկվել են երկկողմ հարաբերությունները, համագործակցության ուղղություններն ու դրանց զարգացման հնարավորությունները: Կողմերը նաեւ քննարկել են տարածաշրջանային եւ միջազգային վերջին զարգացումները եւ դրանց լուծման ուղղությամբ ձեռնարկվող ջանքերը:

Ավելի վաղ լրատվամիջոցները հայտնել էին, որ Մերցը փետրվարի 4-ից կսկսի իր շրջագայությունը դեպի Սաուդյան Արաբիա, Քաթար եւ Արաբական Միացյալ Էմիրություններ՝ էներգետիկայի եւ պաշտպանության ոլորտներում համագործակցության քննարկման նպատակով:

Սաուդյան Արաբիա մեկնելուց առաջ Մերցը հայտարարել էր Պարսից ծոցի տարածաշրջանի հետ ռազմավարական գործընկերությունը խորացնելու իր ցանկության մասին՝ հաշվի առնելով դրա «տնտեսական եւ քաղաքական կարեւորությունը»:

«Մեզ նման գործընկերություններն ավելի քան երբեւէ անհրաժեշտ են այն ժամանակ, երբ մեծ տերությունները գնալով ավելի են գերիշխում քաղաքականության մեջ»,- հայտարարել էր Մերցը:

Մերցի խոսքով՝ Պարսից ծոցի երկրների հետ գործընկերությունը բացում է դռներ Գերմանիայի համար՝ դիվերսիֆիկացնելու նավթի եւ գազի մատակարարման շղթաները:

314 ԳԵՐԻՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ

ԱՄՆ-ի, Ուկրաինայի եւ Ռուսաստանի պատվիրակությունները Աբու Դաբիում ընթացող բանակցություններում պայմանավորվել են 314 գերիների փոխանակման շուրջ, հայտարարել է ԱՄՆ նախագահի հատուկ բանագնաց Սթիվ Ուիթքոֆը:

«Սա վերջին հինգ ամսվա ընթացքում նմանատիպ առաջին փոխանակումն է: Այս արդյունքին հնարավոր է եղել հասնել մանրամասն եւ արդյունավետ խաղաղ բանակցությունների շնորհիվ: Դեռ շատ աշխատանք կա անելու, սակայն նման քայլերը ցույց են տալիս, որ մշտական դիվանագիտական փոխգործակցությունը բերում է շոշափելի արդյունքների եւ առաջ է մղում Ուկրաինայում պատերազմը դադարեցնելու ջանքերը»,-գրել է Ուիթքոֆը X սոցիալական ցանցում: Նա հավելել է, որ բանակցությունները շարունակվելու են «եւ առաջիկա շաբաթների ընթացքում սպասվում է հետագա առաջընթաց»:

Փետրվարի 4-5-ը Աբու Դաբիում ընթանում է ԱՄՆ-ի, Ռուսաստանի եւ Ուկրաինայի միջեւ եռակողմ բանակցությունների նոր փուլը՝ նվիրված ռուս-ուկրաինական պատերազմի դադարեցմանը: Մոսկվայի եւ Կիեւի ներկայացուցիչները բանակցությունների ընթացքի վերաբերյալ պաշտոնական հայտարարություններ չեն արել:

Աբու Դաբիում ընթացող բանակցություններում ռուսական պատվիրակությունը գլխավորում է ՌԴ ԶՈՒ Գլխավոր շտաբի գլխավոր վարչության պետ Իգոր Կոստյուկովը: Ամերիկյան կողմից բանակցություններին մասնակցում են Դոնալդ Թրամփի հատուկ բանագնաց Սթիվ Ուիթքոֆը եւ ԱՄՆ նախագահի փեսա Ջարեդ Քուշները: Ուկրաինան բանակցություններում, ի թիվս այլոց, ներկայացնում են Ազգային անվտանգության եւ պաշտպանության խորհրդի քարտուղար Ռուստեմ Ումերովը եւ նախագահի աշխատակազմի ղեկավար Կիրիլ Բուդանովը:

ԿԿՐՃԱՏՎԻ

ԱՄՆ-ի ռազմածովային ուժերի ատոմային ավիակիրների թվաքանակը մարտին կկրճատվի՝ հասնելով 10-ի: Այդ մասին վկայում են Միացյալ Նահանգների ռազմածովային ինստիտուտի (USNI) լրատվական ծառայության տվյալները: Նշվում է, որ նավատորմի կազմից դուրս կբերվի ամենահին ամերիկյան ավիակիրը՝ USS Nimitz-ը: Ներկայում այն գտնվում է Վաշինգտոնի նահանգի Բրեմերթոն քաղաքի բազայում՝ շահագործումից հանելու եւ միջուկային վառելիքը դատարկելու նախապատրաստական աշխատանքների փուլում: Տարվա ընթացքում ԱՄՆ-ի ռազմածովային ուժերը կունենան 10 ավիակիր՝ ավանդական 11-ի փոխարեն: Սպասվում է, որ 2027թ. մարտին ամերիկյան նավատորմի մարտական կազմը կհամալրի USS John F. Kennedy նորագույն ավիակիրը, որը, հունվարի վերջին դուրս գալով Վիրջինիա նահանգի Newport News Shipbuilding նավաշինարանից, արդեն անցկացրել է մեկշաբաթյա նավարկային փորձարկումները ծովում:

Ներկայում ծովում օպերատիվ առաջադրանքների շրջանակներում գտնվում է միայն երեք ամերիկյան ավիակիր՝ USS Gerald R. Ford-ը, որը երթեւեկում է Կարիբյան ծովում, USS Abraham Lincoln-ը, որը տեղակայված է Իրանից դեպի հարավ գտնվող Արաբական ծովում, եւ USS Theodore Roosevelt-ը, որն անցած շաբաթ Սան Դիեգոյի բազայից դուրս է եկել Խաղաղ օվկիանոս:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ անցած երեք օրերին գրանցվել է զենք-զինամթերք կամավոր հանձնելու 6 դեպք:*

ԼՈՒՐԵՐ

ՊԱՅԹՅՈՒՆԱՎՏԱՆԳ

Միացյալ Նահանգների եւ Իրանի միջեւ հարաբերությունների ներկայիս լարվածությունը պայթյունավտանգ է ամբողջ Մերձավոր Արեւելքի տարածաշրջանի համար: Այս մասին RT-ին տված հարցազրույցում ասել է Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Լավրովը:

«Այս իրադրությունը սկզբունքորեն պայթյունավտանգ է ոչ միայն Իրանի, այլեւ ամբողջ Մերձավոր Արեւելքի համար: Կան շատ ականներ, որոնք կպայթեն դրանց վրա ոտք դնելու առաջին իսկ պահին»,- հայտարարել է Լավրովը: Նա նշել է, որ Իրանը Ռուսաստանի մոտ գործընկերն է, հետեւաբար ռուսական կողմը չի կարող անտարբեր լինել այն զարգացումների նկատմամբ, որոնք տեղի են ունենում տարածաշրջանում: «Իրանը մեր գործընկերն է՝ մոտ գործընկերն ու հարեւանը: Իհարկե, մենք անտարբեր չենք դեպքերի ներկայիս զարգացման նկատմամբ»,- ասել է Ռուսաստանի ԱԳ նախարարը: Նա հայտարարել է, որ ԱՄՆ-ն, Իրանն ու Իսրայելը գիտեն, որ Ռուսաստանը պատրաստ է իր ներդրումն ունենալ մերձավորարեւելյան տարածաշրջանում լարվածության թոթափման հարցում:

ՌՈՒՍԱՍՏԱՆ–ՀՆԴԿԱՍՏԱՆ

Մոսկվան պատրաստ է շարունակել Նյու Դելիի հետ սերտ համագործակցությունն ածխաջրածնային մատակարարումների բնագավառում եւ համոզված է, որ դա նպաստում է միջազգային էներգետիկ շուկայի կայունությանը: Ինչպես տեղեկանում ենք «Ինտերֆաքս» գործակալությունից, այս մասին հայտարարել է ՌԴ արտաքին գործերի նախարարության ներկայացուցիչ Մարիա Զախարովան: «Առաջվա պես համոզված ենք, որ Հնդկաստանի կողմից ռուսական ածխաջրածինների գնումը շահավետ է երկու երկրների համար եւ նպաստում է միջազգային էներգետիկ շուկայում կայունության պահպանմանը: Պատրաստ ենք շարունակել սերտ համագործակցությունն այս բնագավառում Հնդկաստանի մեր գործընկերների հետ», - ասել է նա ճեպազրույցի ժամանակ:

Ավելի վաղ ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը հայտարարել էր, որ Հնդկաստանի վարչապետ Նարենդրա Մոդիի հետ առեւտրային գործարքի շուրջ եկել է համաձայնության, ըստ որի՝ ԱՄՆ-ն Հնդկաստանից ներմուծվող ապրանքների նկատմամբ մաքսատուրքերը 25%-ից կնվազեցնի մինչեւ 18%: Թրամփը հայտնել է, որ Մոդին համաձայնել է դադարեցնել ռուսական նավթի գնումները:

ԿՐՃԱՏՎՈՒՄ Է

Ուկրաինայում հակամարտության կարգավորման շուրջ չլուծված հարցերի ցանկը կրճատվում է, բայց ամենադժվարները մնում են օրակարգում: Ինչպես փոխանցում է ՏԱՍՍ-ը, այս մասին մամուլի ասուլիսում հայտարարել է ԱՄՆ պետքարտուղար Մարկո Ռուբիոն՝ մեկնաբանելով Աբու Դաբիում կայացած եռակողմ բանակցությունները:

«Այս ցանկը զգալիորեն կրճատվել է: Սա լավ լուր է: Վատ լուրն այն է, որ ամենադժվարները մնում են»,-ասել է նա՝ անդրադառնալով ուկրաինական հակամարտության կարգավորման խնդրահարույց հարցերին:

ՏԵՂԵԿԱՑՆՈՒՄ Է Գ

«ՖԱՍԹ ՇԻՖԹ»–Ի ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄԸ

Օրերս հայաստանյան մամուլում տեղ գտած հեռահաղորդակցության ծառայությունների դիմաց վճարումների ընդունման հետ կապված հրապարակումներին ի պատասխան՝ «Ֆաստ Շիֆթ» ՍՊ ընկերությունը տեղեկացնում է.

1. Հեռահաղորդակցության ոլորտի մեր գործընկերների՝ գործակցության նոր պայմանների առաջարկին «Ֆաստ Շիֆթն» անհամաձայնություն է հայտնել՝ շուկայական տրամաբանությանը եւ փոխշահավետությանը դրանց հակասելու պատճառաբանությամբ, ինչին ի պատասխան՝ մեր գործընկերները միակողմանի խզել են համագործակցության պայմանագրերը: Արդյունքում՝ մեր հայրենակիցները զրկվել են հեռահաղորդակցության ծառայությունների դիմաց արագ, անվտանգ եւ հարմարավետ վճարելու հնարավորությունից:

2. Կապի որոշ օպերատորների հանրային պարզաբանումներում տեղ են գտել զրպարտչական ձեւակերպումներ: Մասնավորապես, կոմունալ ծառայություններ մատուցող մեր գործընկերների հետ համագործակցության պայմանները «4 անգամ» կամ «400%-ով» գերազանցող միջնորդավճարների պահանջի մասին հայտարարությունները որեւէ կերպ հիմնավորված չեն եւ չեն համապատասխանում իրականությանը: Նման համեմատական զուգահեռներ անցկացնելն իսկ անտրամաբանական է՝ հաշվի առնելով սակագների սահմանման խիստ տարբերվող մեթոդաբանությունը. կոմունալ ծառայությունների սակագները պետական կարգավորման տիրույթում են, հեռահաղորդակցությունը՝ազատ շուկայական մեխանիզմների կիրառման:

3. Իրական որեւէ հիմք չունեցող տեղեկությունների վկայաբերմամբ գնահատականներ հնչեցնելը չարդարացված մոտեցում է, նաեւ՝ բիզնես էթիկայի խախտում եւ վնասում է «Ֆաստ Շիֆթ» ՍՊԸ գործարար համբավին:

4. «Ֆաստ Շիֆթ» ընկերության վճարահաշվարկային ծառայությունների գնագոյացումը պայմանավորված է մի շարք հանգամանքներով, մասնավորապես վճարումների ընդունման շուկայում տվյալ օպերատորի զբաղեցրած ծավալը, շրջանառության ծավալը, գործարքների քանակը, գործարքների միջին գումարը, ինչպես նաեւ ընկերության ներդրումները՝ կանխիկ դրամական միջոցների շրջանառության հետ կապված գործառնական ռեսուրսների, տերմինալների սպասարկման, թվային հարթակների կառավարման, անվտանգային ապահովության ուղղություններով: Եւ չնայած սպասարկման, անվտանգության եւ ենթակառուցվածքների պահպանման աճող ծախսերին, հատկապես վերջին մի քանի տարում, մեր հայրենակիցների համար վճարային ծառայությունների հասանելիության, պահպանման նկատառումով շարունակել ենք ծառայությունները մատուցել նույն պայմաններով:

5. Գործող սակագների առաջարկվող գրեթե 50% կրճատումը համադրելի չէ առկա ծախսերի կառուցվածքին եւ կխախտի անգամ նվազագույն տնտեսական հավասարակշռությունը՝ գործնականում անհնար դարձնելով ծառայության մատուցումը:

6. Հանրային տիրույթում կոմերցիոն բանակցություններ վարելու գործելաոճը խաթարում է առողջ եւ հավասար մրցակցությունը, շուկայում ձեւավորում խտրական մթնոլորտ, որը որեւէ կերպ չի կարող նպաստել ֆինանսական համակարգի կայունությանը եւ անկանխիկ տնտեսության զարգացմանը:

7. Շուկայում առողջ մրցակցության եւ սպառողների համար հավասար հնարավորությունների պահպանման նպատակով «Ֆաստ Շիֆթ» ՍՊ ընկերությունը դիմել է ՀՀ մրցակցության եւ սպառողների շահերի պաշտպանության հանձնաժողովին եւ ՀՀ Կենտրոնական բանկին:

«Ֆաստ Շիֆթը» վերահաստատում է իր հանձնառությունը՝ նպաստել վստահելի գործընկերության ու հաճախորդակենտրոն մշակույթի արմատավորմանը եւ բաց է փոխշահավետ համագործակցությունը շարունակելու ուղղությամբ բանակցությունների համար: «Ֆաստ Շիֆթը» գործադրում է հնարավոր բոլոր ջանքերն իր օգտատերերի՝ հեռահաղորդակցության ծառայությունների դիմաց վճարումներ կատարելու հարմարավետությունն ապահովելու ուղղությամբ:

«800,000 ՌՈՒՍ ՋԻՆՎՈՐԻ ԴԻԱԿ»

Վլադիմիր Պուտինից առնվազն երկու տարի կպահանջվի ամբողջ Դոնբասը գրավելու համար, եւ այս հարձակման գինը կկազմի մոտավորապես 800,000 զոհված ռուս զինվոր: Այս մասին հայտարարել է Ուկրաինայի նախագահ Վլադիմիր Զելենսկին France Televisions-ին տված հարցազրույցում: «Ռուսաստանը ցանկանում է, որ մենք լքենք Դոնբասը: Ինչո՞ւ: Որովհետեւ, երբ նրանք սկսեցին այս պատերազմը, ոչ մի հաղթանակ չգրանցեցին: Մենք շատ լավ հասկանում ենք, թե ինչ գին է վճարում ռուսական բանակը ուկրաինական հողի յուրաքանչյուր մետրի համար: Նրանք չեն հաշվում մահացածներին: Արեւելյան Ուկրաինայի նվաճումը նրանց կարժենա եւս 800,000 դիակ՝ իրենց զինվորների դիակները: Նրանցից առնվազն երկու տարի կպահանջվի՝նրանց շատ դանդաղ առաջխաղացման դեպքում: Իմ կարծիքով, նրանք այդքան երկար չեն դիմանա», - ասել է պետության ղեկավարը:

Խոսելով պատերազմը դադարեցնելու հնարավոր զիջումների մասին՝ Զելենսկին հայտարարել է, որ նույնիսկ ներկայիս առաջնագծի երկայնքով հակամարտության սառեցումն արդեն իսկ նշանակալի զիջում է Կիեւի կողմից: Նա նշեց, որ կարգավորման ցանկացած տարբերակ պահանջում է փոխադարձ քայլեր: Մասնավորապես, եթե ստեղծվի հատուկ տնտեսական գոտի, երկու կողմերն էլ ստիպված կլինեն նահանջել, մինչդեռ ապառազմականացված գոտու գաղափարը հնարավոր է միայն այն դեպքում, եթե յուրաքանչյուր կողմ վերահսկի իր սեփական մասը, իսկ նրանց միջեւ տեղակայված լինեն միջազգային անջատողական ուժեր, բացատրել է Ուկրաինայի նախագահը:

Զելենսկին նաեւ մեղադրեց ռուսական զորքերին ցուրտ եղանակը որպես ուկրաինական հասարակության վրա ճնշում գործադրելու գործիք օգտագործելու փորձի մեջ: Նրա խոսքով՝ ենթակառուցվածքների եւ խաղաղ բնակիչների վրա հարձակումները նպատակ ունեն ստիպել Ուկրաինային ընդունել այսպես կոչված «փոխզիջումը»: «Ռուսները չեն հասկանում, որ որքան շատ են հարձակվում խաղաղ բնակիչների վրա, այնքան շատ են սպանում, այնքան շատ են խախտում պատերազմի կանոնները, այնքան ավելի են հեռացնում Ուկրաինայի եւ Ռուսաստանի միջեւ փոխզիջման հեռանկարը»,- նշել է նա:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱԿ

ՄԵԿՆԱՐԿՈՒՄ Է ԳԱՈՒԴԻԻ ՏԱՐԻՆ

Բարսելոնայի «Կասա Բատլյո»-ն բացեց ճարտարապետ Անտոնի Գաուդիի մահվան հարյուրամյակին նվիրված միջոցառումների տարին՝ տպավորիչ աուդիովիզուալ շոուով, որը հայտնի մոդեռնիստական շենքի պատերի ներսում բացեց ժամանակակից արվեստի ցուցահանդեսների նոր տարածք:

Անտոնի Գաուդիի «Կասա Բատլյո»-ն հակադրությունների ներդաշնակության վառ օրինակ է:

Այն իսպանացի ճարտարապետի ստեղծագործական հանճարի շարունակական տոնակատարություն է՝ սկսած նրա նորարարական լուծումներից եւ բազմազան շինանյութերի համադրություններից մինչեւ բնության հանդեպ նրա մոլուցքը:

Տունը տարեկան ընդունում է գրեթե երկու միլիոն այցելու եւ հաճախ անվանում են «ճարտարապետական պատմության մեջ կարեւորագույն իրադարձություն»: Առաջադեմ թվային լրացված իրականության սարքերը թույլ են տալիս եւ՛ երեխաներին, եւ՛ մեծահասակներին ուսումնասիրել դրա բազմագույն վիտրաժների եւ փոխակերպվող մոդեռն ինտերիերի ամենափոքր մանրամասները:

«Կասա Բատլյո»-ի քարտեզագրման նախագիծը ժամանակավոր աուդիովիզուալ փորձառություն է, որը ցուցադրվում է ընդամենը երկու գիշեր:

Նշելով իր հինգերորդ հրատարակությունը եւ արագ դառնալով Բարսելոնայի առաջատար անվճար տեսարժան վայրերից մեկը՝ Casa Batllg-ն հրավիրում է արվեստագետներին ստեղծել մի շոու, որը ժամանակավորապես կվերափոխի Գաուդիի գլուխգործոցի ճակատային մասը:

Ինչպես տեղեկանում ենք Ewronews-ից, այս տարվա նախագիծը նկատելիորեն տարբերվում է. «Թաքնված կարգը» լոնդոնյան «United Visual Artists» ստուդիայի համահիմնադիր Մեթ Քլարկի տպավորիչ, աղմկոտ եւ կենսունակ աշխատանքն է:

Նախագիծը կյանքի կոչելու համար Քլարկը վարձել է միջազգային պարուհի եւ պարուսույց Ֆուկիկո Տակասեին: Նա ձայնագրել է նրա շարժումները՝ օգտագործելով շարժման գրանցման տեխնոլոգիա՝նրա մարմինը վերածելով ճակատային մասի հիմնական տեսողական տարրի:

Աշխատանքի վերնագիրը արտացոլում է «L'ordre invisible» կարգախոսը՝Գաուդիի 2026 թվականի պաշտոնական կարգախոսը, որը շեշտում է ճարտարապետի կարողությունը համատեղել երեւակայությունն ու գիտական խստությունը բնության դիտարկման միջոցով:

«Գաուդին մի անգամ ասել է, որ ուղիղ գիծը պատկանում է մարդուն, իսկ կորը՝ Աստծուն: Նա հավատում էր, որ բնությունը կառավարվում է ավելի խորը երկրաչափական սկզբունքներով: Որպես նկարիչ՝ ես միշտ գրավվել եմ մակերեսի տակ թաքնված համակարգերով՝ այն կառույցներով, որոնք նրբորեն ձեւավորում են մեզ շրջապատող աշխարհը», - ասել է Քլարկը:

Տակասեի կենդանի ելույթը ճակատային մասում ավելի հարստացրեց փորձառությունը՝ ստեղծելով անմիջական կապ խորհրդանշական շենքի եւ ներքեւում հավաքված մարդկանց միջեւ: «Մենք քարտեզագրումը համարում ենք քաղաքին տրված նվեր՝ կենդանի Համաշխարհային ժառանգության վայրի հետ հանդիպման բաց պահ»,-բացատրեց Casa Batllg-ի գործադիր տնօրեն Գարի Գոտիեն:

Այս տարի Գաուդիի ժառանգությանը հատուկ ուշադրություն կդարձվի Բարսելոնայի՝ որպես ճարտարապետության համաշխարհային մայրաքաղաք հռչակվելու պատճառով: Քաղաքի բոլոր տասը թաղամասերում կանցկացվեն միջոցառումներ, բաց դռների օրեր, սեմինարներ եւ ինստալյացիաներ՝ ցույց տալով, որ ճարտարապետությունը կարող է եւ պետք է լինի համատեղ ձեռնարկ:

Գոտիեի խոսքով՝Գաուդին այսօր ավելի արդիական է, քան երբեւէ, ճարտարապետության, ճարտարագիտության եւ քաղաքաշինության համար: «Գաուդիի ճարտարապետական մարտահրավերները լուծելու համար իր նախագծերում բերած նորարարական լուծումների մեծ մասն այժմ ընկալվում է այլ կերպ: Դրանք այլեւս պարզապես դեկորատիվ միջոցներ չեն, այլ լուծումներ, որոնք լուծում են այսօրվա շենքերի մեծ մասի առջեւ ծառացած մարտահրավերները. շենքերը պետք է լինեն կենդանի, «շնչող» եւ կայուն. սա հենց այն է, ինչ ճարտարապետներն այսօր փնտրում են: Գաուդին կառուցել է՝այս հասկացողությունը հաշվի առնելով նույնիսկ անցյալ դարում եւ ավելի վաղ», - ավելացրեց նա:

ԳՐԵՏԱ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

ԱՇԽԱՐՀ

ՊԱՏԵՐԱԶՄ 200 ՄԼՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Լեգենդար դիզայներ Կարլ Լագերֆելդի մահից յոթ տարի անց նրա ժառանգությունը կրկին ուշադրության կենտրոնում է: Այս անգամ խնդիրը վիճարկվող 200 միլիոն եվրոն է, որը Լագերֆելդը թողել է ոչ թե իր ընտանիքին, այլ իր մտերիմ շրջապատի սիրելիներին... եւ իր կատվին, հաղորդում է Daily Mail-ը:

Դիզայների սիրելի կատուն՝ Շուպետը, վաղուց արդեն իսկ հայտնի է: Լագերֆելդը հոգ էր տանում նրա մասին ինչպես իսկական թագուհու. նա ունի առանձին տուն՝ այգով, անձնական խնամակալ եւ նույնիսկ 1,5 միլիոն դոլար՝ շքեղության մեջ ապրելու համար: Instagram-ի լուսանկարներում Շուպետը ճանապարհորդում է մասնավոր ինքնաթիռներով՝ կրելով Louis Vuitton-ի շքեղ պայուսակներ, իսկ Met Gala-ում նա նախընտրում է տանը քնել, քան հայտնվել կարմիր գորգին:

Սակայն մնացած 200 միլիոն եվրոյի ժառանգությունը սկանդալ է առաջացրել: 2016 թվականի իր կտակում դիզայները ոչինչ չի թողել իր հարազատներին՝ ամեն ինչ թողնելով «իր իրական ընտանիքին».

- անձնական օգնական Սեբաստիան Ժոնդո,
- նրա սանիկ Հադսոն Կրոնիգ,
- երկու մոդելներ՝ Բրեդ Կրոնիգ եւ Բապտիստ Զաբիկոնի:

Այժմ անհայտ հայցվորը վիճարկում է կտակը, ինչը հնարավորություն է տալիս Լագերֆելդի զարմիկներին ստանալ իրենց բաժինը:

Ընտանեկան կապեր եւ հիասթափություն

Կառլի քույրը՝ Քրիստիանը, 1950-ականներին գաղթել է Միացյալ Նահանգներ եւ ունեցել չորս երեխա, այդ թվում՝ Փոլ եւ Ռոջեր Զոնսոններ, ինչպես նաեւ Քերոլայն Ուիլքոքս: Չնայած անցյալի ընտանեկան կապերին (Լագերֆելդը նույնիսկ Քերոլայնին ուղարկել է իր հարսանեկան զգեստը «Քոնքորդ»-ով)՝ շփումը նվազագույն էր. դիզայները Քրիստիանին չէր տեսել 1974 թվականից ի վեր, եւ Ռոջերը նախկինում ասել էր, որ քիչ հավանական է, որ ընդունի ժառանգությունը: Մեկ այլ քույր՝Թեան, պոտենցիալ ժառանգորդ կարող է դառնալ նրա դուստրը՝ Թոմա Գրեֆին ֆոն դեր Շուլենբուրգը, ով այժմ 82 տարեկան է:

Իրավական նրբերանգներ եւ հարկեր

Կտակի շուրջ վեճերից բացի, Լագերֆելդի կարողության վրա կախված են նաեւ հարկային հարցեր. ֆրանսիական իշխանությունները պնդում են, որ դիզայների հիմնական տունը գտնվում էր Փարիզում, այլ ոչ թե Մոնակոյում, ինչը կարող է հանգեցնել 20-40 միլիոն եվրոյի հարկային պարտքի:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՓՈԽԵԼ Է ԾՐԱԳԻՐԸ

Աշխարհի չեմպիոն Արգենտինայի հավաքականի ավագ, 38-ամյա հարձակվող Լիոնել Մեսին փոխել է մարզումային ծրագիրը, որպեսզի լավագույնս պատրաստվի աշխարհի առաջնությանը, հաղորդում է The Touchline-ը:

Նա վերանայել է մարզումային ծրագիրը նաեւ հնարավոր վնասվածքներից խուսափելու նպատակով: Մեսին մինչեւ ամառ շեշտը կդնի վերականգնողական փուլի վրա՝սահմանափակելով ֆիզիկական եւ արագաուժային մարզումները: «Ինտեր Մայամին» Մեսիին հնարավորություն կտա ինքնուրույն որոշել հանդիպումներին մասնակցելն ու հանգիստ վերցնելը:

Մեսին Արգենտինայի հավաքականում մասնակցել է 196 հանդիպման, խփել 115 գոլ, դարձել աշխարհի չեմպիոն եւ Ամերիկայի կրկնակի գավաթակիր:

ԼԱՎԱԳՈՒՅՆՆԵՐԸ

Ֆրանսիական Canal+ հեռուստաալիքը ներկայացրել է 21-րդ դարի լավագույն դարպասապահների իր վարկածը՝ առաջին տեղում նշելով «Բավարիայի» եւ Գերմանիայի հավաքականի խաղացող Մանուել Նոյերին:

21-րդ դարի լավագույն դարպասապահները՝

1. Մանուել Նոյեր
2. Ջանլուիջի Բուֆոն
3. Տիբո Կուրտուա
4. Իկեր Կասիլյաս
5. Օլիվեր Կան
6. Պետր Չեխ
7. Էդվին վան դեր Սար
8. Ֆաբիեն Բարտեզ
9. Ուգո Լյորիս
10. Կեյլոր Նավաս
11. Յան Օբլակ
12. Ջանլուիջի Դոնարումա
13. Դիդա
14. Ալիսոն
15. Էմիլիանո Մարտինես

ԸՆԹԱՆՈՒՄ Է

Այս օրերին Երեւանում ընթանում է ՈՒԵՖԱ-ի Ֆուտբոլային բժիշկների կրթական ծրագիրը (FDEP): Այն Հայաստանում անցկացվում է առաջին անգամ: Ծրագրի ընթացքին հետեւում է Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ Արմեն Մելիքբեկյանը:

Բացման արարողությանը ներկա էին ՀՀ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը, ՀՖՖ բժշկական դեպարտամենտի ղեկավար Նարեկ Վանեսյանը եւ ՈՒԵՖԱ-ի բժշկական ծառայության ղեկավար Զորան Բահտիյարեւիչը:

FDEP-ին մասնակցում են ՈՒԵՖԱ-ի անդամ 51 ֆուտբոլային ասոցիացիաների ներկայացուցիչ բժիշկներ: FDEP-ի շրջանակում վերապատրաստվում են մասնագետներ ֆուտբոլային բժշկության տարբեր ոլորտներում՝ արտակարգ բժշկական միջամտություն, վնասվածքների կանխարգելում, վերականգնում, սնուցում եւ հոգեբանական աջակցություն՝ֆուտբոլիստների առողջության եւ անվտանգ խաղային միջավայրի ապահովման նպատակով:

● *Փետրվարի 6-ին՝ժամը 19:30-ին, Հակոբ Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում տեղի կունենա «Սեր եւ Նարինջներ» ներկայացումը:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Մեկ անգամ ապաստարան ստանալու հայց ներկայացրել եմ, բայց սխալ կա մեջը. կարո՞ղ եմ նորից ներկայացնել:

Արտակ Սողոմոնյան, 41 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Ապաստանի դիմումի վերջնական (ներառյալ դատական կարգով) մերժումից հետո կարող եք կրկին դիմում ներկայացնել Միգրացիոն ծառայություն՝ Հայաստանում ապաստան ստանալու համար, եթե՝

առաջացել են նոր հանգամանքներ, որոնք նախկին դիմումի քննության ժամանակ չեն եղել,

Դուք ունեք նոր ապացույցներ, որոնք նախկին դիմումի քննարկման ժամանակ չեք կարողացել ներկայացնել:

ՄԱԿ ՓԳՀ Հայաստան

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նոր դիմումի քննարկման ժամանակահատվածում Դուք ունեք ապաստան հայցող անձանց համար սահմանված նույն իրավունքները եւ պարտականությունները, որոնք ունեիք Ձեր առաջին դիմումի քննարկման ընթացքում:

Էջը՝ ԳՐԵՏԱ ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ուզում եմ իմանալ՝ որ դիմորդներն արտոնություններից օգտվելու հնարավորություն ունեն:

Կիմա Ստեփանյան, 35 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայտնում ենք, որ՝

1) Քննությունները դրական միավորներով հանձնելու դեպքում ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին մրցույթից դուրս ընդունվում են՝

ա. ՀՀ պաշտպանության ժամանակ զոհված զինծառայողների երեխաները,

բ. ժամկետային զինվորական ծառայության պարտականությունները կատարելիս հաշմանդամ դարձած քաղաքացիները:

2) Վճարովի համակարգի համար առնվազն անցումային միավորներ հավաքելու դեպքում անվճար ուսուցման համակարգ են ընդունվում՝

ա. 1-ին եւ 2-րդ խմբերի հաշմանդամություն ունեցող անձինք եւ մինչեւ 18 տարեկան հաշմանդամ երեխաները,

բ. առանց ծնողական խնամքի մնացած մինչեւ 23 տարեկան երեխաները:

3) Մրցութային հավասար միավորների դեպքում առավելություն է տրվում մարտական հերթապահություն իրականացնող, զորամասերում պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցած եւ ծառայության դրական ցուցանիշներ ունեցող դիմորդին:

4) Առանց ընդունելության քննության ՀՀ կառավարության կողմից հատկացված պահուստային տեղերի հաշվին բուհ են ընդունվում միջնակարգ դպրոցի հանրակրթական առարկաների գծով միջազգային օլիմպիադաների հաղթողները, տարբեր մարզաձեւերի գծով աշխարհի եւ Եվրոպայի առաջնությունների մրցանակակիրները, որոնք ընդունելության դիմումհայտում հայտագրել են համապատասխան մասնագիտությունները:

ՀՀ ԿԳՄՍՆ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված դիմորդները զորացրվելուց հետո՝ երեք տարվա ընթացքում, քննությունները դրական միավորներով հանձնելու դեպքում անվճար ուսուցմամբ ընդունվում են ընդհանուր մրցույթից դուրս՝ ըստ մասնագիտությունների՝ ՀՀ կառավարության կողմից հաստատված տեղերի:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Աբովյան փողոցում

Եկեղեցու պատերը վեհ լռությամբ նայում են անցորդներին, իսկ բակում առօրյայի ամենապարզ հերոսներից մեկը՝ թափառող շունը, հանգիստ քայլքով հատում է տարածքը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	-11 - 15 - 1 + 1
Կոտայքի լեռներ	- 8 - 12 - 2 + 1
Կոտայքի նախալեռներ	- 2 - 5 + 3 + 5
Գեղարքունիք	- 8 - 12 - 2 + 3
Լոռի	- 2 - 6 + 5 + 9
Տավուշ	-2 - 5 + 6 + 10
Արագածոտնի լեռներ	- 10 - 14 0 - 3
Արագածոտնի նախալեռներ	- 2 - 6 + 2 + 5

Արարատ	-2 - 5 + 3 + 6
Արմավիր	- 2 - 5 + 5 + 8
Վայոց ձորի լեռներ	- 7 - 11 - 1 + 2
Վայոց ձորի նախալեռներ	0 - 3 + 5 + 8
Սյունիքի լեռներ	- 8 - 11 0 + 2
Սյունիքի նախալեռներ	- 2 - 7 + 4 + 8
Սյունիքի հովիտներ	- 2 + 2 +10 + 14
Երեւան	- 3 - 4 + 5 + 7

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **05.02.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*